

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Տ. Դավթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ
Գ. Խաչատրյան

30 դեկտեմբերի 2010 թ.

15 դեկտեմբերի 2010 թ. N 27

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 27

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 28-ՐԴ ԵՎ «ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 11-ՐԴ ՀՈՂՎԱԾՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՄԻՆԶԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՎԵՐՁԻՆ ՕՐԸ ՆԵՐԱՌՅԱԼ ՎՃԱՐԵԼՈՒ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԿՐԿՆԱՊԱՏԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածին համապատասխան՝ հարկ վճարողը նշված հոդվածով նախատեսված տուգանքը մուծում է հարկային տեսչության կողմից խախտման (կրկնական) փաստն արձանագրվելուց հետո՝ երեսօրյա ժամկետում: Նշված ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է:

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված է, որ նույն հոդվածով նախատեսված տուգանքը կրկնապատկվում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից խախտման փաստն արձանագրելուց հետո երկամսյա ժամկետում չմուծելու դեպքում:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84 հոդվածի 1-ին մասի համաձայն եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը: Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի հիմնարկում կամ կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ կազմակերպությունում կամ հիմնարկում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները:

Վերոնշյալ դրույթների կիրառման հետ կապված՝ դեկլարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87 հոդվածի 2-րդ մասով՝ **պաշտոնապես պարզաբանում եմ՝**

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով սահմանված տուգանքների գումարները մինչև օրենքով սահմանված ժամկետների վերջին օրը ներառյալ վճարելու դեպքերում տուգանքի գումարի կրկնապատկման դրույթը կիրառելի չէ՝ պատասխանատվության միջոցի կիրառման համար հիմք համարվող իրավախախտման փաստի բացակայության հիմնավորմամբ (պարտականությունը բովանդակային առումով կատարված է):